ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 21.03.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/20

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 19.02.2018թ. թիվ 04/26-3/2989-18 գրությամբ «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1.**<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 15.02.2018թ. թիվ ՆՁ/06.1/1657-18 գրության հիման վրա, 19.02.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ առողջապահության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ առողջապահության նախարարությունը 15.02.2018թ. թիվ ՆՁ/06.1/1657-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ «Ավտոմեքենաների սպասարկման ծառայություններ» ձեռքբերելու նպատակով իրականացվել է «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ» ծածկագրով գնման ընթացակարգ: Գնման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից վերապատրաստված և համապատասխան հավաստագիր/սերտիֆիկատ ունեցող մասնագետների կողմից /առնվազն մեկ մասնագետ/: Ընդ որում, նշված հավաստագիրը պետք է ներկայացվի հայտով: Սակայն, «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի կողմից չեն ներկայացվել համապատասխան փաստաթղթերը, որի արդյունքում վերջինիս կողմից ներկայացված հայտը մերժվել է»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ առողջապահության նախարարության ներկայացուցիչ Աննա Հարությունյանը:

3. <u>«Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ն 23.02.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ ծածկագրով գնանշման հարցման հրավերում մեր ընկերության դիտարկմամբ առկա է եղել ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի

կազմակերպման» կարգով (այսուհետ՝ Կարգ) չսահմանված պահանջ, իսկ պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրում Ձեր կողմից նշված պահանջը չի կարող հանդիսանալ գնահատման չափորոշիչ: Կարգի 64-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված է՝ եթե գնման առարկայի նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի հնգապատիկը կամ գնման առարկան անշարժ գույք է կամ գնման ընթացակարգը կազմակերպվում է նույն կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված հիմքով, ապա նույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջը չի սահմանվում հրավերով և մասնակիցը հայտով ներկայացնում է միայն հայտարարություն պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, ինչը ապահովվել է Ընկերության կողմից: Նույն կետի 4-րդ ենթակետով սահմանված է՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն կետով նախատեսված պահանջները:

Միաժամանակ, հայտնում եմ, որ պայմանագրի նախագծի տեխնիկական բնութագրով սահմանված դրույթը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, քանի որ պատվիրատուն ունի տարբեր մակնիշի ավտոմեքենաներ և գործնականում ՀՀ տարածքում չկա այնպիսի ավտոտեխսպասարկման կայան, որը կարող է միաժամանակ ունենալ բոլոր մակնիշներն արտադրող գործարանների կողմից լիցենզավորված մասնագետներ: ՈՒստի, սահմանված պահանջը խտրական է և սահմանափակում է մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնելով տնտեսվարողներին գնման գործընթացին հնարավոր մասնակցությունը»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վիգեն Գևորգյանը:

<u>4.ՍՑ-ԷՍ-2018/20 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.02.2018թ. թիվ 04/26-3/2989-18 գրությունը, ՀՀ առողջապահության նախարարության 15.02.2018թ. թիվ ՆՁ/06.1/1657-18 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի կողմից 23.02.2018թ. ներկայացված գրավոր դիրքորոշումը, ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ Հրավեր), ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 02.02.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունը, «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի միջև 01.03.2017թ. կնքված №1 պայմանագիրը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը.

ՀՀ առողջապահության նախարարությունը ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպել է ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3 հավելվածով՝ հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին:

Հանձնաժողովը 02.02.2018թ. կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով արձանագրել է, որ «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ծառայությունների գների աղյուսակում նույն ծառայության տողում երկու նույն ավտոմեքենաների համար տարբեր գումարներ են լրացված, բացի այդ չեն ներկայացվել նաև տեխնիկական բնութագրով պահանջվող հավաստագրերը:

Նույն կետով Հանձնաժողովը ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն նիստը կասեցրել է և 22.01.2018թ. ծանուցել է «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ծառայությունների գների շտկված աղյուսակը և բացակայող փաստաթղթերը: Պահանջվող փաստաթղթերի փոխարեն «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ն ներկայացրել է շտկված էքսել աղյուսակը և «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի

միջև կնքված պայմանագիրը, որը Հանձնաժողովի կողմից չի համարվել համարժեք հրավերով սահմանված պահանջին:

Հանձնաժողովը նույն արձանագրության 7.1 կետով որոշել է մերժել Ընկերության կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

«Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ն 01.02.2018թ. գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ուղարկում «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի աշխատակցի աշխատանքային գրքույկը, ով ունի համապատասխան փորձ և որակավորում՝ հավաստագիր/սերտիֆիկատ, սակայն ինչ-ինչ պատճառներով տվյալ սերտիֆիկատը ոչնչացվել է, տվյալ կազմակերպության հետ «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ն չի կարող հանդես գալ կոնսորցիումով, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ կետում ասվում է, որ մասնակիցները կարող են գնման ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝ հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիրը: Հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի այդ պայմանագրով տվյալ անդամի ստանձնած՝ հրավերով սահմանված որակավորման պահանջներին: Հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որևէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը: Նշենք նաև այն, որ «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ապրանքանյութական արժեքների ձեռքբերման պայմանագրում նշված է սպասարկում, այսինքն այն իր մեջ ներառում է նաև այն աշխատողներին, որոնք զբաղվելու են աշխատանքների կատարմամբ: Ելնելով դրանից, անհրաժեշտ չենք համարել աշխատանքային ռեսուրսների մասին լրացուցիչ պայմանագիր կնքել: Իսկ ըստ անհարժեշտության ասելով, ի նկատի ենք ունեցել այն, որ ավտոմեքենայի տեխնիկական անսարքություններ ունենալու դեպքում համաձայն մեր միջև կնքված պայմանագրի դրույթների ծառայությունները պետք է մատուցի համապատասխան որակավորմամբ

աշխատակիցը, ինչը կարող է ունենալ պարբերական բնույթ: Ցանկանում ենք նշել նաև, որ ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում չկա Տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից վերապատրաստված մասնագետ, ով ունի հավաստագիր/սերտիֆիկատ»:

Ի պատասխան «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի գրության Պատվիրատուն 12.02.2018թ. գրությամբ Ընկերությանը հայտնել է հետևյալը.

«Ձեր կողմից ուղարկված գրության մեջ նշվում է, «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ն «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ ունի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և ապրանքանյութական արժեքների ձեռքբերման պայմանագիր, ըստ որի վերը նշված կազմակերպությունը ունի համապատասխան սարքավորումներ, որակավորում և փորձ ունեցող մասնագետներ, որոնք ըստ անհրաժեշտության և «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ի պահանջի կիրականացնեն Հունդայի մակնիշի ավտոմեքենաների տեխնիկական սպասարկումը: Սակայն, ներկայացված պայմանագիրը վերաբերում է միայն տեխնիկական սպասարկման և ապրանքանյութական արժեքների ձեռքբերմանը, աշխատանքային ռեսուրսների մասով ոչինչ նշված չէ: ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ Ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի Տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից վերապատրաստված և համապատասխան հավաստագիր/սերտիֆիկատ ունեցող մասնագետների կողմից, ինչը պետք է ապահովվի պարբերաբար, այլ ոչ թե ըստ անհրաժեշտության: «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի աշխատողների սերտիֆիկատի առկայությունը կարող էր ապահովել սահմանված պահանջի բավարարումը, եթե ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/2-ԳՀ ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Ձեր կազմակերպությունը «Գարանտսերվիս» ՍՊԸ-ի հետ հանդես գար կոնսորցիումով: Այս դեպքում, եթե դուք չունեք համապատասխան մասնագետ, դուք պետք է լրացուցիչ համաձայնագրով ներգրավեք այնպիսի մասնագետ, որը կբավարարի սահմանված պահանջին: Ելնելով Վերոգրյալից՝ խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով պահանջվող հավաստագիրը: Սահմանված ժամկետում ոչինչ չներկայացնելու դեպքում Ձեր հայտը ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետը»:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ (...)պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է մասնակիցների որակավորման չափանիշները, այդ թվում շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ, «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակը, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության,

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:
- 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին վերաբերող պահանջները սահմանվել են Հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Պատվիրատուն չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջը խտրական չէ և ուղղակիորեն բխում է պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից:

Խորհուրդը հարկ է համարում նշել նաև, որ Հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 Հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում Պատվիրատուն պետք է նկարագրեր ծեռք բերվող ծառայությունների նկարագիրը, այլ ոչ թե մասնակցին ներկայացվող «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին վերաբերող տվյալներ:

Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնման առարկա հանդիսացող «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման ծառայություններ»-ի ձեռքբերման Հրավերով Պատվիրատուի կողմից չէին կարող նախատեսվել «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, քանի որ նշված չափանիշը հրավերով կարող է սահմանվել բացառապես կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված դեպքերում, այն է՝ շինարարական ծրագրերի՝ ներառյալ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, տեխնիկական հսկողության և խորհրդատվական ծառայությունների գնումների, ինչպես նաև այն գնումների դեպքում,

երբ Հայաստանի Հանրապետության գործող ստանդարտների կամ նորմատիվ-տեխնիկական պահանջների համաձայն կնքվելիք պայմանագրի պատշաճ կատարման նպատակով պահանջվում են համապատասխան աշխատանքային ռեսուրսներ:

Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն Հրավերի տեխնիկական բնութագրով վերը նշված պահանջը սահմանելով՝ խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով և, Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.02.2018թ. «Մ.Բի.Ռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**